Կարգապահական գործ թիվ ԿԳ-25056

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՐԻԱՄ ԱՐԱՄԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, մասնակցությամբ Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Միքայել Դանիելյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Մարիամ Արամի Աբրահամյանին **(այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 490) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Անուշ Հովակիմյանը **(այսուհետև նաև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև նաև՝ Պալատ),** հայտնել է, որ 2020 թվականին դիմել է փաստաբան Մարիամ Աբրահամյանին և լիազորել է նրան, որպեսզի նա զբաղվի իր սնանկության գործով: Փաստաբանական ծառայության համար նրան վճարել է 200 000 ՀՀ դրամ: Սակայն փաստաբանը մինչ դիմումի ներկայացման օրն անգործություն է դրսևորել, չի իրազեկել գործի ընթացքի մասին և գրեթե չի պատասխանել նամակներին և հեռախոսազանգերին և, ստանալով ծառայության արժեքը, պատշաճ չի կատարել իր պարտականությունները:

Ըստ Դիմողի՝ Փաստաբանը 2022 թվականից սկսած մի քանի անգամ Դիմողի կամավոր սնանկությունը ճանաչելու պահանջով դիմում է ներկայացրել դատարան, և անընդհատ ստացվել է դիմումը վերադարձնելու մասին որոշում: Ստացվում է՝ ըստ Դիմողի՝ Փաստաբանը թերացել է իր աշխատանքի մեջ և դատարանի կողմից մատնանշված թերությունները չի վերացրել մինչ դիմումի ներկայացման օրը՝ դատարանին պատշաճ դիմում չի ներկայացրել:

Թիվ ԿԳ-25056-2-Ա
30.04.2025թ.

Դիմողը հայտնել է նաև, որ Փաստաբանն իր հետ չի կնքել փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, իսկ Փաստաբանին վճարված գումարների վճարման անդորրագրերը չեն պահպանվել:

Սույն կարգապահական վարույթը հարուցվելուց հետո, կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Դիմողին 2025 թվականի մարտի 20-ի «Պահանջ» վերտառությամբ փաստաթղթով առաջարկվել է այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ: Նշված գրությանը Դիմողը սահմանված ժամկետում չի արձագանքել, լրացուցիչ դիրքորոշում և/կամ նյութեր չի ներկայացրել, իսկ այդ ժամկետից հետո՝ 2025 թվականի ապրիլի 02-ին, Հանձնաժողովին է ներկայացրել դիմում, որին կից նոր նյութեր չեն ներկայացվել, այլ պարզապես ներկայացրել է իր դիրքորոշումը սույն կարգապահական վարույթի վերաբերյալ:

Հանձնաժողովի նիստին Դիմողը չի մասնակցել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Դիմողի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2025 թվականի հունվարի 10-ի դիմումով Պալատի նախագահին խնդրել է երկարաձգել իր կողմից բացատրություն ներկայացնելու ժամկետը, ինչը Պալատի նախագահի կողմից կատարվել է՝ Փաստաբանին բացատրություն ներկայացնելու համար տրամադրված ժամկետը երկարաձգելով մինչև 2025 թվականի հունվարի 15-ը:

Փաստաբանը 2025 թվականի հունվարի 14-ին փոստային ծառայությանը հանձնված բացատրությամբ հայտնել է, որ 2021 թվականի օգոստոսի 20-ին Դիմողի հետ կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր, սակայն ծառայությունների մատուցումը, ըստ պայմանագրի, պետք է իրականացվեր 2022 թվականի հունվար ամսից, քանի որ Դիմողին պայմանագրի կնքման պահին բացատրվել է, որ սնանկ ճանաչելու մասին վճռի կայացման պահից սկսած մինչև աշխատավարձի նկատմամբ Սնանկության դատարանի կողմից կիրառված արգելանքները վերացնելու վերաբերյալ միջնորդության բավարարումը աշխատավարձի հետ կապված խնդիրներ են առաջանալու: Այս փաստով պայմանավորված, ըստ Փաստաբանի՝ Դիմողն ինքն է առաջարկել և խնդրել, որպեսզի պայմանագրում նշվի ծառայությունների մատուցումը 2022 թվականի հունվար ամսից սկսելու մասին:

Փաստաբանը նշել է, որ 2022 թվականի հունվար ամսից սկսած հավաքագրվել են համապատասխան փաստաթղթերը և ներկայացվել են Սնանկության դատարան: Դատարանը թիվ ՍՆԴ/3418/04/22 սնանկության գործով դիմումը վերադարձրել է, և քանի որ, ըստ Փաստաբանի՝ դիմումը և կից փաստաթղթերը վերադարձնելու որոշումը հիմնավոր չի եղել՝ այն բողոքարկվել է վերադասության կարգով, սակայն Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժել է:

Ըստ Փաստաբանի՝ հաշվի առնելով այն, որ վճռաբեկության կարգով բողոքարկման արդյունքում բավականին երկար ժամանակահատված սնանկության գործն առաջ չի գնալու, Դիմողի հետ համաձայնեցնելով որոշվել է կրկին հավաքագրել փաստաթղթերը և ներկայացնել ՀՀ սնանկության դատարան:

Փաստաբանը հավելել է, որ երկրորդ անգամ փաստաթղթերը հավաքագրվել և ներկայացվել են 2023 թվականին՝ թիվ ՍՆԴ/1573/04/23 սնանկության գործով, հիմքը՝ դիմումին կից չի ներկայացվել պարտատերերի կողմից տրված տեղեկանքի կամ հաշվի քաղվածքի բնօրինակները, որտեղ արտացոլված կլիներ պարտապանի պարտավորությունների չափը սնանկ ճանաչելու դիմումը դատարան ներկայացնելու օրվա դրությամբ: Ընդ որում, Փաստաբանն իր պնդմամբ Դիմողին հայտնել է, որ կամ նոտարական կարգով լիազորագիր տրամադրի Փաստաբանին՝ բանկերից համապատասխան ապացույցները ձեռք բերելու համար, կամ անձամբ ձեռք բերի դրանք և տրամադրի:

Փաստաբանի պնդմամբ՝ Դիմողը նախընտրել է անձամբ ձեռք բերել և տրամադրել փաստաթղթերը, սակայն հասկանալով, որ Դիմողը չի ներկայացնում դրանք՝ դիմումը մուտքագրվել է դատարան, որպեսզի ձեռք բերված ապացույցների 90-օրյա ժամկետի վաղեմությունը չանցնի:

Այնուամենայնիվ, ըստ Փաստաբանի՝ Դիմողը չի ներկայացրել դրանք, ինչի արդյունքում դիմումը վերադարձվել է:

Ըստ Փաստաբանի՝ քանի որ հավաքագրված փաստաթղթերի 90-օրյա ժամկետը լրացել է, դրանք կրկին են հավաքագրվել և ներկայացվել 2024 թվականին, ընդ որում՝ երկու անգամ:

Փաստաբանը հավելել է, որ 2024 թվականին փաստաթղթերը հավաքագրվել են երրորդ անգամ՝ ՍՆԴ/0197/04/24 և ՍՆԴ/0517/04/24 գործերով: Մի քանի անգամ 2024 թվականի սեպտեմբեր ամսին զանգահարել է Դիմողին, ով չի պատասխանել զանգերին, նաև հաղորդագրություն է ուղարկել համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու համար, սակայն դրանք մինչ բացատրության ներկայացման պահը չեն ներկայացվել:

Փաստաբանը եզրահանգել է, որ Դիմողն ինքն անձամբ խոչընդոտելով իր սնանկության գործի ընթացքին, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ է ներկայացրել, որը ոչնչով չի հիմնավորվել, ուստի գտել է, որ դիմումն անհիմն է ու ենթակա է մերժման:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթը հարուցվելուց հետո, կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Փաստաբանին 2025 թվականի մարտի 20-ի «Պահանջ» վերտառությամբ փաստաթղթով առաջարկվել է այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, ինչին Փաստաբանը չի արձագանքել, լրացուցիչ դիրքորոշում և/կամ նյութեր չի ներկայացրել:

Հանձնաժողովի նիստին Փաստաբանը չի մասնակցել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 2025 թվականի հունվարի 23-ի թիվ 67-Ա/ԿԳ-25056 որոշմամբ Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի էթիկայի կանոնագրքի **(այսուհետև նաև՝ Կանոնագիրք)** 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի

խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը 2025 թվականի հունվարի 24-ին հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Դավիթ Առաքելյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 2025 թվականի մարտի 24-ին կազմել է եզրակացություն, որում շարադրվել են կարգապահական գործի կողմերի դիրքորոշումները, գործում առկա նյութերի ցանկը և էական այլ տվյալներ:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-3-րդ կետերում շարադրված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 2025 թվականի մարտի 24-ին:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 2025 թվականի ապրիլի 30-ին ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանի և Դիմողի միջև 2021 թվականի օգոստոսի 20-ին կնքվել է փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագիր: *Տվյալ փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված պայմանագրի պատճենով, որի իսկությունն ու իրավաբանական այլ հատկանիշները Հանձնաժողովը լիազորված չէ կասկածի տակ առնել:*

2. Փաստաբանը ստանձնել է Դիմողի կամավոր սնանկության գործը, ինչի շրջանակներում 4 անգամ Դիմողի անունից կամավոր սնանկ ճանաչվելու պահանջով դիմել է Սնանկության դատարան, սակայն դիմումներից և ոչ մեկը վարույթ չի ընդունվել, ավելին՝ դիմումը վերադարձնելու մասին միայն մեկ դատական ակտ է Փաստաբանի կողմից բողոքարկվել վերաքննության կարգով, սակայն չի վերացվել ու այդպիսով հաստատվել է այդ դատական ակտի իրավաչափությունը, իսկ մյուս 3 դիմումները վերադարձնելու մասին դատական ակտերը Փաստաբանի կողմից չեն բողոքարկվել, ինչպես նաև Փաստաբանի կողմից չի ներկայացվել Դիմողի կամավոր սնանկության մասին որևէ այլ դիմում, որը վարույթ ընդունված կլիներ Սնանկության դատարանի կողմից: *Տվյալ փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալներով:*

3. Փաստաբանը Դիմողին կանոնավորապես չի տեղեկացրել վերջինիս գործի (հանձնարարության կատարման ընթացքի) մասին: *Տվյալ փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից հակառակը հաստատող ապացույցների չներկայացմամբ՝ հաշվի առնելով, որ չտեղեկացնելու փաստը հանդիսանում է բացասական փաստ, որի*

առկայությունը Դիմողն ապացուցել չի կարող, փոխարենը Փաստաբանն է պարտավոր ապացուցել տեղեկացնելու փաստը:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանողը փաստաբան է հանդիսանում 2006 թվականի հոկտեմբերի 20-ից և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում ունի 1 կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի մասով Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ պայմանավորված այդ մասով Փաստաբանի վարքագծում խախտման առկայությամբ:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է՝*

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված,*

սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝ ա. նյութերի ուսումնասիրությունը, բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը, գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը, դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի համադրված վերլուծության ու մեկնաբանության շրջանակներում Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը յուրաքանչյուր գործ ստանձնելիս պետք է օժտված լինի տվյալ գործը պատշաճ վարելու համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների բավարար իմացությամբ ու բավարար գործնական փորձով, ինչը ոչ միայն մասնագիտական, այլև վարքագծային-էթիկական նշանակության կանոն է, առանց որի կատարման հնարավոր չէ կամ առնվազն վտանգված է տվյալ գործով բարեխիղճ իրավական օգնության տրամադրումը, ներառյալ նաև՝ հնարավոր իրավական հետևանքների գիտակցումն ու դրանց առաջացման մասին իրազեկումը վստահորդին, ինչպես նաև գործը պատշաճ վարելու համար անհրաժեշտ գործողությունների կատարումը և հակառակի արդյունքում վստահորդին սպասվող անբարենպաստ, սակայն կանխելի հետևանքների կանխարգելումը: Ավելին, գործը պատշաճ վարելուց զատ, փաստաբանը պարտավոր է վստահորդի հետ ապահովել նաև կայուն և հասանելի կապ, ինչը մի կողմից ենթադրում է փաստաբանի ակտիվ ու նախաձեռնողական վարքագիծ՝ վստահորդին նրա գործի (հանձնարարության կատարման ընթացքի) մասին կանոնավորապես տեղեկացնելու եղանակով՝ անկախ նույնիսկ վստահորդի հարցումների առկայությունից, իսկ մյուս կողմից ենթադրում է արձագանքող վարքագիծ՝ վստահորդի կողմից առաջադրվող հարցերին պատշաճ պատասխանելու եղանակով:

Նշվածի շրջանակներում անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման առկայությանը՝ Հանձնաժողովը հատուկ ընդգծում է, որ միայն գործի կամ հարցի՝ ոչ ի նպաստ վստահորդի լուծումն ինքնին, առանց լրացուցիչ փաստերի ու հանգամանքների, չի կարող մեկնաբանվել որպես Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման բավարար հիմնավորում, ինչը բխում է նաև Օրենքի 39.1 հոդվածի 3-րդ մասից:

Այդուհանդերձ, որևէ գործի կամ հարցի՝ ոչ ի նպաստ վստահորդի լուծումը կամ թեկուզև որևէ լուծման կամ պատշաճ ընթացքի բացակայությունն ինքնին բավարար հիմք է՝ Փաստաբանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման առկայությունը քննելու համար, եթե առկա է կարգապահական վարույթ, ընդ որում՝ վարույթի հարուցումից հետո նույնիսկ վստահորդի բողոքի հետկանչը չի արգելակում տվյալ հարցի քննությունը և չի բացառում Փաստաբանի կարգապահական պատասխանատվությունը՝ նկատի ունենալով, որ այդպիսի օրենսդրական հիմքեր առկա չեն, իսկ նմանատիպ հարցերը մասնավոր գանգատի կանոններով չեն քննարկվում կամ թողնվում առանց քննարկման:

Վերոնշյալ դատողությունների շրջագծում անդրադառնալով տվյալ կոնկրետ դեպքում Փաստաբանի վարքագծի իրավաչափությանն ու համապատասխանությանը Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջներին՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում վկայակոչված դրույթներով նախատեսված խախտումներն առկա են, քանի որ տվյալ կոնկրետ դեպքում Փաստաբանի կողմից Դիմողին տրամադրված իրավական օգնությունը կասկածի տակ է դնում Դիմողի հանձնարարության բարեխիղճ և պատշաճ կատարման համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների իմացությունն ու գործնական փորձին տիրապետելու հանգամանքը Փաստաբանի կողմից, քանի որ Փաստաբանը 3 տարվա ընթացքում 4 անգամ Դիմողի կամավոր սնանկության պահանջով դիմել է Սնանկության դատարան, սակայն ներկայացված դիմումներից և ոչ մեկը վարույթ չի ընդունվել, չի քննվել և չի լուծվել իրավասու դատարանի կողմից, ընդ որում՝ դիմումների վերադարձման մասին դատական ակտերի իրավաչափությունը կասկածի տակ առնվել չի կարող՝ հաշվի առնելով, որ այդպիսի 4 դատական ակտերից երեքը Փաստաբանի կողմից նույնիսկ չեն բողոքարկվել վերաքննության կարգով՝ առնվազն ըստ սույն վարույթի նյութերի չունենալով Դիմողի համաձայնությունը դրա վերաբերյալ, իսկ բողոքարկված միայն մեկ դատական ակտը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից թողնվել է անփոփոխ ու ստացել է օրինական ուժ՝ ի հավաստումն այդ դատական ակտի իրավաչափության, ուստիև՝ Փաստաբանի կողմից Դիմողի համար կազմված կամավոր սնանկության դիմումի և կից փաստաթղթերի՝ օրենսդրությանն անհամապատասխանության:

Փաստորեն, Դիմողի հանձնարարության կատարման շրջանակներում Փաստաբանը շուրջ 3 տարվա ընթացքում 4 անգամ դիմել է Սնանկության դատարան՝ Դիմողին կամովին սնանկ ճանաչելու պահանջով, սակայն ներկայացված դիմումներից և ոչ մեկը նույնիսկ վարույթ չի ընդունվել՝ պայմանավորված դիմումի և/կամ կից փաստաթղթերի թերություններով, ինչն անհրաժեշտ ու բավարար պայման է՝ Դիմողի հանձնարարության կատարման շրջանակներում Փաստաբանի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման առկայությունը փաստելու համար՝ նկատի ունենալով, որ շարադրված փաստերը ողջամիտ կասկածից վեր են դարձնում Փաստաբանի կողմից անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների պատշաճ չիմացությունը և/կամ չուսումնասիրելը, Դիմողի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքները պատշաճ չուսումնասիրելը, Դիմողի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ չկատարելը, Փաստաբանի կողմից Դիմողի գործով իր մասնագիտական պարտականությունները ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն ու ժամանակին չկատարելը, Դիմողին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին պատշաճ չիրազեկելը:

Հանձնաժողովն ընդգծում է նաև, որ Փաստաբանն իրավասու չէր առանց Դիմողի համաձայնության՝ զերծ մնալ Դիմողի կամավոր սնանկության դիմումը վերադարձնելու առնչությամբ ի վնաս Դիմողի կայացված դատական ակտերը բողոքարկելուց, սակայն դրսևորել է հակառակ վարքագիծ՝ այդպիսով չցուցաբերելով բարեխիղճ իրավական օգնություն Դիմողին:

Ավելին, Հանձնաժողովը հատկանշական է համարում նաև այն, որ թիվ ՍՆԴ/0197/04/24 սնանկության գործով Դիմողի անունից Փաստաբանի կամավոր սնանկության դիմումը վերադարձվել է դեռևս 2023 թվականի մայիս ամսին, ինչը նույն ամսին հասանելի է դարձել «Դատալեքս» համակարգում, սակայն Փաստաբանը Դիմողի հանձնարարության կատարման շրջանակներում հաջորդ անգամ Սնանկության դատարան է դիմել ավելի քան 7 ամիս անց՝ 2024 թվականի հունվար ամսին՝ թիվ ՍՆԴ/0197/04/24 գործի շրջանակներում, ուստի հաշվի առնելով, որ ժամանակային այդպիսի մեծ տևողության ողջամտության հիմնավորման ու ապացուցման մասով Փաստաբանը բավարար փաստարկներ և որևէ ապացույց չի ներկայացրել՝ Հանձնաժողովն այս վարքագիծը ևս գնահատում է որպես Փաստաբանի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտում:

Ողջ վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը գտնում է, որ նախորդիվ նկարագրվածն ինչպես առանձին վերցված, այնպես էլ համակցությամբ պարունակում է Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտում՝ Փաստաբանի կողմից, ընդ որում՝ Փաստաբանի մեղքի բացակայության մասին ապացույցներ առկա չեն, որպիսի պարագայում Փաստաբանն այս մասերով ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Կանոնագրքի 3.6.1 ենթակետի ու նաև այդ շրջանակներում Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման առկայությանը՝ Հանձնաժողովը փաստում է, որ Փաստաբանը որևէ ապացույց չի ներկայացրել՝ ի հավաստումն իր կողմից տվյալ վարքագծային-էթիկական կանոնի ակտիվ ու նախաձեռնողական հատվածի կատարման՝ Դիմողին իր գործի (հանձնարարության կատարման ընթացքի) մասին կանոնավորապես տեղեկացման, ընդ որում՝ այս մասով ապացույցներ պետք է ներկայացներ հենց Փաստաբանը՝ նկատի ունենալով, որ իր կողմից որևէ գործողության կատարման վերաբերյալ ապացույցներն առկայության դեպքում տրամաբանորեն գտնվում են հենց Փաստաբանի տիրապետման ներքո, իսկ նույն գործողության չկատարումն ինքնին հանդիսանում է բացասական (ժխտողական) փաստ, որի ապացուցման պարտականությունը չի կարող դրվել բացասական փաստ վկայակոչող կամ դրական փաստը ժխտող անձի՝ սույն դեպքում Դիմողի վրա: Ինչ վերաբերում է Փաստաբանի ներկայացրած կարճ հաղորդագրության էկրանային պատկերին, ապա առաջին հերթին՝ այն չի վկայում Փաստաբանի կողմից Դիմողին ***կանոնավորապես*** տեղեկացնելու մասին, քանզի պարունակում է ընդամենը մեկ հաղորդագրություն՝ շուրջ 3 տարի շարունակ վարվող գործի մասին, ավելին՝ այդ հաղորդագրությունը ոչ թե պարունակում է Դիմողի գործի ընթացքի մասին տեղեկացում, այլ՝ փաստաթղթի պահանջ, որոնք նույնական չեն: Ամեն դեպքում, ցանկացած գնահատման դեպքում, միայն մեկ հաղորդագրությունը չի կարող վկայել Փաստաբանի կողմից Դիմողին շուրջ 3 տարի շարունակ վարվող գործի, ներառյալ նաև՝ կատարվող գործողությունների, կայացվող դատական ակտերի և այլ զարգացումների վերաբերյալ ***կանոնավորապես*** տեղեկացնելու մասին:

Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է նաև, որ նախորդիվ նկարագրվածն իր հերթին պարունակում է Կանոնագրքի 3.6.1 ենթակետի ու նաև այդ շրջանակներում Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում՝ Փաստաբանի կողմից, ընդ որում՝ Փաստաբանի մեղքի

բացակայության մասին ապացույցներ առկա չեն, որպիսի պարագայում Փաստաբանն այս մասով ևս ենթակա է կարգապահական պատասխանատվության:

8. Կարգապահական տույժի ընտրությունը.

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի՝ սույն որոշմամբ նկարագրված խախտման համար պետք է կիրառել հիմնական կարգապահական տույժ՝ «տուգանք»՝ 200 000 ՀՀ դրամ, ինչպես նաև լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել»՝ Սնանկության ոլորտի օրենսդրության թեմայով, իր հաշվին, 4 ակադեմիական ժամ տևողությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Օրենքի 39.10 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Տուգանքի չափը սահմանում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը, որը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Տուգանքը փաստաբանը վճարում է փաստաբանների պալատի բյուջե:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Սույն խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Հանձնաժողովի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Հանձնաժողովի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննարկելով և լուծելով:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել՝ խախտում թույլ տված փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է կարգապահական վարույթի քննության յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ, եթե առկա է խախտում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Փաստաբանին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից ու համադրությունից, մասնավորապես՝ տվյալ պարագայում Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ տվյալ իրավիճակում Փաստաբանը տևական ժամանակ բարեխղճորեն ու պատշաճ չի կատարել Դիմողի հանձնարարությունը և վերջինիս չի ապահովել պատշաճ իրավաբանական օգնությամբ, ավելին՝ գործի ընթացքի մասին Դիմողին կանոնավորապես չտեղեկացնելով՝ Դիմողի մոտ ստեղծել է անորոշություն և հանգեցրել փաստաբանների հանդեպ Դիմողի վստահության որոշակի խաթարմանը, բացի այդ՝ շուրջ 3 տարի շարունակ չիրականացնելով Դիմողի կամավոր սնանկության հարցը դատական քննության

առարկա դառնալու համար անհրաժեշտ գործողությունները՝ Փաստաբանն այդպիսով նպաստել է Դիմողի նկատմամբ տուժանքի հնարավոր հավելագրմանն այդ ողջ ընթացքում, ինչպես նաև Դիմողին տևական ժամանակ զրկել է վերջինիս սնանկության դիմումը վարույթ ընդունվելու, ապա նաև՝ հնարավոր բավարարվելու արդյունքում Դիմողի հետապնդած բարենպաստ իրավական հետևանքներին հասնելուց, ինչպիսիք են, օրինակ, կատարողական վարույթների կասեցումը և/կամ կարճումը, պարտավորությունների կատարում պահանջելու և տրամադրելու սահմանափակումները, և այլն: Այսինքն, Հանձնաժողովի գնահատմամբ, Փաստաբանի թույլ տված խախտումներն ունեն ինչպես ոչ նյութական, այնպես էլ նյութական անբարենպաստ նշանակություն Դիմողի համար, ինչը հանգեցնում է արարքն ու պատասխանատվությունն էապես ծանրացնող հանգամանք և թելադրում է այդպիսի վարքագծին խիստ ներգործելու անհրաժեշտությունը՝ ապահովելու համար այդպիսի ներգործության արդյունավետությունն ինչպես Փաստաբանի, այնպես էլ Դիմողի նկատմամբ:

Հանձնաժողովն ընդգծում է նաև, որ Փաստաբանի մեղքի բացակայության մասին ապացույցներ ձեռք չեն բերվել, ավելին՝ Փաստաբանը Հանձնաժողովի 2025 թվականի մարտի 19-ի թիվ ԿԳ/24177-2-Ա թեկուզև դեռ ուժի մեջ չմտած որոշմամբ արդեն իսկ նույն խախտումների համար ենթարկվել է «խիստ նկատողություն» և «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» կարգապահական տույժերի, ինչը ևս մի կողմից հանդիսանում է արարքն ու պատասխանատվությունն էապես ծանրացնող հանգամանք, մյուս կողմից վերստին ընդգծում է սույն գործով Հանձնաժողովի կողմից կարգապահական խիստ ներգործություն ցուցաբերելու արդարացված ու հիմնավորված անհրաժեշտությունը՝ տրամագծորեն փաստելով առավել մեղմ կարգապահական ներգործություն ցուցաբերելու անկարելիությունն ու անարդյունավետությունը:

Հետևաբար, Հանձնաժողովի գնահատմամբ՝ Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ անհրաժեշտ է կիրառել «տուգանք» տույժի տեսակն առավելագույն՝ 200.000 ՀՀ դրամի չափով՝ հաշվի առնելով նախորդիվ կատարված դատողությունները, ինչպես նաև որպես լրացուցիչ կարգապահական տույժ անհրաժեշտ է կիրառել «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» տույժի տեսակը՝ իր հաշվին՝ «Սնանկության վարույթների առանձնահատկությունները» թեմայով 4 ակադեմիական ժամ տևողությամբ՝ հաշվի առնելով, որ թույլ տրված խախտումները վկայում են Փաստաբանի կողմից այդ ոլորտի օրենսդրական կարգավորումների իմացությունը բարելավելու անհրաժեշտության մասին, առանց որի Փաստաբանը փաստացի տվյալ ոլորտում չի տրամադրում բարեխիղճ իրավական օգնություն իր վստահորդներին:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով նաև Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով և 7-րդ մասով, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով, նույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով՝ Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Մարիամ Արամի Աբրահամյանի (արտոնագիր թիվ 490) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «տուգանք»՝ 200 000 (երկու հարյուր

հազար) ՀՀ դրամի չափով, ինչպես նաև լրացուցիչ կարգապահական տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Սնանկության վարույթների առանձնահատկությունները» թեմայով, 4 ակադեմիական ժամ տևողությամբ՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25056-2-Ա
30 ապրիլի 2025թ.
ք.Երևան